

Կ Ա Ր Ծ Ի Ք

պաշտոնական ընդդիմախոսի

Ռոզա Էդիկի Բարսեղյանի «Ճագարների էյմերիոզի հարուցիչների բազմազանությունը և համաճարակաբանությունը Հայաստանում» թեմայով - Գ. 00. 08՝ «Կենդանաբանություն. մակաբուծաբանություն. Էկոլոգիա» մասնագիտությամբ կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Ճագարաբուծությունը՝ արդյունաբերական անասնաբուծության ճյուղ է, որը հնարավորություն է տալիս կարճ ժամանակահատվածում ստանալ արժեքավոր (դիետիկ) մսամթերք՝ կերերի համեմատաբար ցածր ծախսերով: Բացի այդ ճագարներից կարելի է ստանալ կախված ցեղատեսակից թեթև արդյունաբերական հումք՝ մորթի, բուրդ և աղվամազ:

Ճագարաբուծության հաջող զարգացման համար կարևոր նշանակություն ունի լավ պայմանների ապահովումը, կերակրումը և ցեղատեսակի բարելավումը, անասնաբուժա-սանիտարական միջոցառումները, որոնք ճագարներին պաշտպանում են տարբեր հիվանդություններից, այդ թվում՝ էյմերիոզից:

Էյմերիոզը համարվում է ճագարների ամենատարածված մակաբուծային հիվանդություններից մեկը, որը մեծ վնաս է հասցնում ճագարաբուծական տնտեսություններին: Էյմերիոզի վնասը չի սահմանափակվում միայն ճագարների անկումներով, նրանք հետ են մնում աճից և կորցնում են իրենց կենդանի զանգվածը: Խիստ նվազում է ճագարների սպանդային մթերքի սննդային արժեքը: Բացի այդ, տնտեսություններում ճագարների բուժման և հիվանդության կանխարգելման համար կատարվում են մեծ ծախսեր:

Հայաստանում էյմերիոզի խնդիրը համարվում է արդիական, ինչը պայմանավորված է վարակվածության բարձր ցուցանիշներով և ճագարաբուծության հասցրած հսկայական տնտեսական վնասը: Ուստի էյմերիոզի ուսումնասիրությունը շատ կարևոր է արդի պայմաններում:

Ելնելով վեր նշվածից Ռոզա Բարսեղյանի թեկնածուական ատենախոսությունը նվիրված է Հայաստանում ճագարների էյմերիոզի հարուցիչների բազմազանության, համաճարակաբանության և պայքարի միջոցների ուսումնասիրմանը և գնահատմանը:

Նշված նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

- Բացահայտել Հայաստանում ճագարների էյմերիոզի հարուցիչների տեսակային կազմը;
- Պարզաբանել Հայաստանի լեռնային, նախալեռնային և հարթավայրային գոտիներում ճագարների էյմերիոզի հարուցիչներով վարակվածության էքստենսիվության և ինտենսիվության կախվածությունը տարիքից և սեզոնից;
- Ուսումնասիրել լաբորատոր պայմաններում էյմերիաներով վարակված տարբեր ցեղերի ճագարների վարակվածության ցուցանիշները;
- Բացահայտել հիվանդ ճագարների արյան հիմնական ձևաբանական ցուցանիշները:
- Պարզել կերի դերը էյմերիոզի հարուցիչներով վարակվածության ժամանակ:
- Սշակել ճագարների էյմերիոզի կանխարգելման միջոցառումներ:

Հեղինակը ամփոփելով լայնածավալ հետազոտությունների տվյալները, ներկայացրել է ատենախոսության գիտական նորույթը, այն է՝

- Հայաստանի լեռնային, նախալեռնային և հարթավայրային գոտիներում առաջին անգամ բացահայտվել է ճագարների էյմերիաների տեսակային կազմը և արձանագրվել են *E. exigua* և *E. coecicola* տեսակները:
- Հայաստանի լեռնային, նախալեռնային և հարթավայրային գոտիներում առաջին անգամ նկարագրվել է ճագարների էյմերիաներով վարակվածության էքստենսիվության և ինտենսիվության կախվածությունը տարիքից և սեզոնից:
- Առաջին անգամ Հայաստանում նկարագրվել են էյմերիոզի հարուցիչներով վարակված հսկա և կալիֆորնիական ցեղերի ճագարների արյան ձևաբանական ցուցանիշները:
- Առաջին անգամ փորձարկվել է հիգիենիկ պայմանների բարելավման հետ զուգահեռ համակցված կերի օգտագործումը 10 օրյա ժամկետում:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, 4 գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Աշխատությունում ընդգրկված է 42 նկար և 25 աղյուսակ: Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է 115 համակարգչային էջ, որին կցված է 7 էջ հավելված:

Օգտագործված գրականության ցանկն ընդգրկում է 221 անուն հայրենական (12) և արտասահմանյան (209) հրատարակումներ:

Ատենախոսության նյութերը հրատարակվել են 11 գիտական աշխատանքներում: Կատարված աշխատանքների արդյունքները ներկայացվել են մի շարք միջազգային գիտաժողովներում, ինչպես նաև քննարկվել են ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության ինստիտուտի, ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի գիտական խորհուրդների 2018-2023թթ. նիստերում:

Յուրաքանչյուր գլխում ատենախոսը ներկայացնում և վերլուծում է իր առջև դրված նպատակային խնդիրների հետ կապված ստացված տվյալները:

Աշխատանքի ներածության բաժնում հիմնավորված են ատենախոսության արդիականությունը, անհրաժեշտ պահանջներին համապատասխան նշված են աշխատանքի նպատակն ու խնդիրները, պաշտպանության ենթակա հիմնադրույթները, գիտական նորույթն և ստացված արդյունքների գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին գլխում ներկայացված են Հայաստանի ֆիզիկաաշխարհագրական նկարագիրը, ճագարների գլխաքանակի մասին տվյալներ, պահվածքի տեխնոլոգիան, հիմնական մակաբուծային հիվանդությունները, էյմերիոզի ախտածնությունը և տարածվածությունը:

Ատենախոսության երկրորդ գլխում ատենախոսը նկարագրել է հետազոտության օբյեկտը և ուսումնասիրության մեթոդները, որոնք համապատասխանում են ընտրված հետազոտությունների բնույթին: Տվյալների վարիացիոն վիճակագրական մշակումը կատարվել է համակարգչային Statistica 8 վերլուծական փաթեթի միջոցով:

Ատենախոսության երրորդ գլխում ներկայացված են էյմերիոզի համաճարագաբանությունը և ախտորոշումը: Հայաստանի լեռնային, նախալեռնային և հարթավայրային տարածաշրջաններում ճագարների էյմերիոզի հարուցիչների տեսակային կազմը, ճագարների վարակվածության էքստենսիվությունը և ինտենսիվությունը կախված տարիքից, սեռից և սեզոնից, ինչպես նաև լաբորատոր պայմաններում էյմերիաներով վարակված տարբեր ցեղի ճագարների վարակվածության ցուցանիշները:

Աշխատանքի չորրորդ գլխում ներկայացված են կլինիկական հետազոտությունները, արյան ձևաբանական ցուցանիշները, ճագարների

Էյմերիաներով վարակվածության ազդեցությունը արյան ձևաբանական ցուցանիշների վրա, կանխարգելիչ միջոցառումները:

Ատենախոսության հիմնական արդյունքներն ամփոփվել են 7 կետից բաղկացած եզրակացություններում: Վերջիններս տրամաբանորեն բխում են ատենախոսության բովանդակությունից և արտացոլում են ստացված արդյունքները:

Ատենախոսության հիմնադրույթները լիովին արտացոլված են 11 հրապարակումներում:

Մեղմագիրը ամբողջությամբ համապատասխանում է ատենախոսության բովանդակությանն ու կառուցվածքին:

Կարծում եմ գրախոսվող աշխատանքը՝ կունենա կարևորություն թե՛ կենսաբանության, թե՛ անասնաբուժության բնագավառի աշխատողների համար՝ գործնական նպատակներին ծառայացնելու տեսակետից:

Բարձր գնահատելով գրախոսվող ատենախոսությունը, այնուամենայնիվ կցանկանայի պարզաբանումներ ստանալ որոշ հարցերի վերաբերյալ՝

1. Դուք նշում եք, որ էյմերիոզով հիվանդ ճագարների մսեղիքների սննդային որակը իջնում է, սակայն չեք շարունակում այն միտքը, որ դրանք կարող են նաև որոշ դեպքերում մարդկանց համար սննդային թունավորման պատճառ հանդիսանալ:

Հետևաբար, ի՞նչպիսի սանիտարական գնահատական է նախատեսված էյմերիոզով հիվանդ ճագարների սպանդային մթերքների համար:

2. Դուք նշում եք, ճագարներին տրվել է սեփական կղանքը կերի մնացորդների հետ խառնված, այնուհետև որոշվել է կղանքում էյմերիների տեսակային կազմը և էյմերիաների տարբեր տեսակներով վարակվածության ինտենսիվությունը: Արդյո՞ք հնարավոր չէր որոշել տեսակային կազմը բնական վարակված ճագարների մոտ:

3. Դուք նշում եք, որ վարակվածության ինտենսիվությունը կախված է սեզոնից, սակայն տարբեր ցեղերի ճագարների վարակումը և հետազոտումը անց եք կացնում տարբեր սեզոններին:

Վերը նշված դիտողությունները չեն ազդում ատենախոսության ընդհանուր արժեքի վրա, քանի որ հեղինակին հաջողվել է մեթոդական ճիշտ մոտեցումներով կատարել ծրագրված հետազոտական աշխատանքները:

Ատենախոսության նյութերը, հիմնական դրույթներն ու ստացված արդյունքներն ունեն գիտական և գործնական արժեք, կարող են օգտագործվել մակարոնաբանության բուհական դասախոսություններում, ինչպես նաև ճագարաբուծական ոլորտում աշխատող մասնագետների կողմից:

Աշխատանքը կատարված է մեծաքանակ նյութի հիման վրա: Ստացված արդյունքները ենթարկվել են վիճակագրական վերլուծության: Գրական տեղեկությունները օգտագործված են նպատակային, համապատասխան վերլուծություններով:

Ըստ բովանդակության, գիտական և գործնական նշանակության ատենախոսությունը համապատասխանում է Գ.00.08 «Կենդանաբանություն. մակարոնաբանություն. էկոլոգիա» մասնագիտությանը:

Այսպիսով, Ռոզա Էդիկի Բարսեղյանի «Ճագարների էյմերիոզի հարուցիչների բազմազանությունը և համաճարակաբանությունը Հայաստանում» թեմայով ատենախոսությունն արդիական, ավարտուն գիտական հետազոտություն է, փաստացի նյութի ծավալով, գիտական նորությամբ, տեսական և կիրառական նշանակությամբ համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը՝ Ռոզա Էդիկի Բարսեղյանը, արժանի է Գ.00.08 «Կենդանաբանություն. մակարոնաբանություն. էկոլոգիա» մասնագիտությամբ կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:


Պաշտոնական ընդդիմախոս՝

ՀԱԱՀ անասնաբուժության և անասնաբուժա-
սանիտարական փորձաքննության հետազոտական կենտրոնի
առաջատար գիտաշխատող, ան. գ. դ. Գրորգիսյան

“Վ.Վ. Աբրահամյանի ստորագրությունը հաստատում էմ”
Ա. Ա. Ավագյան

11.01.2024թ.




Վ. Վ. Աբրահամյան